

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԱԶԳԵՐՆԻՍ ԿՅԱՌԱԶԱԳԻՄԷ ԿՈՐ

(Նամակ խմբագրութեան)

Կարդացինք Լէօ-ի «Ստեփաննոս Նաղարեանց» նոր հրատարակութիւնը:

Կարդացինք և, շմտնելով մանրամասնութիւնների մէջ, կուղէինք մի քանի խօսք ասել մեր ստացած տպաւորութիւնների և մեր մէջ դարթեցրած խոհերի մասին:

Գրքի թէ նաչխուն շապիկը և սրա ծղրտան նկարները, թէ համարձակ լեզուն ու ճաճառն բառերը, թէ ուժգին շեշտերն ու ձիգ բացականչութիւնները կրում են «առաջադիմական» հանդիսանալու բոլոր պայմանները:

Յայտնի է, որ Լէօն, ինչպէս քանիցս շեշտել է «Մշակ»-ի մէջ իր «Կիրակնօրեայ» թէ հանապազօրեայ զրոյցներում ու լօղուածներում, միշտ գրում է «նոր այբուբենից» սկսող ընթերցողների համար: Իր նոր լուս հանած գրքի մէջ էլ միակ շեշտաւոր մեղադրանքը, որ բացարձակապէս տալիս է Ստեփաննոս Նաղարեանցին, հէնց այն է, որ նա, Նաղարեանցը իր «Հիւսիսափայլը» խմբագրելիս չէ հետևել Լէօի անդուպական օրինակին. այսինքն՝ «նոր այբուբենից» սկսող ընթերցողների ճաշակին ու մտքին չէ խորմարեցրել իր «Հիւսիսափայլի» բովանդակութիւնը: Ուրիշ խօսքերով՝ Նաղարեանցը «Հիւսիսափայլը» հրատարակելուց առաջ չէ եղել աշակերտած մեր խորողին:

Լէօն իբրև հասարակ ժողովրդի մարդ շատ լաւ գիտէ, որ «նոր այբուբենից» սկսող ընթերցողների առաջ կամ չպէտք է բնաւ պակասաւոր, սխալական կողմեր ցոյց տալ այն գործիչների, որոնց ուզում են պաշտելի դարձնել այդ սկսնակների, այդ հասարակների աչքում, կամ, եթէ արդարիտներ էլ պատահեն, պէտք է սրբած, մաքրած, արդարացրած ներկայացնել: Գիտէ և այն, որ արդարիտների առաջ մեծ, գիտնական հեղինակ հանդիսանալու համար պէտք է մեծերից բռնացնել, բարձրից սկսել, առանց կանգ առնելու՝ աջ ու ձախ հարուս-

ծել, իր հերոսին զովելով չբաւականանալու դէպքում՝ նրա հակառակորդներին լաւ կշտապինդ ու նորալուր լիշոցներով փառաւոր դարդարել:

Մեր առաջադիմական գործի այժմեան կապալառուները այս ամենը շատ լաւ են սերտել և շատ աւելի լաւ էլ զիտեն այդ ընթացքում դափնիներ վաստակել: Այսպիսով մի անդամից թէ իրենց ուղած մարդկանց են ժողովրդականացնում և թէ, որ ամենից զլխաւորն է, իրենք են ժողովրդականանում, մեծանում:

Այսպէս չէ ընթացել և Լէօն, արդեան առաջադիմականների հրապարակում «բանիբուն» հրատարակուած այդ հրապարակադիրը:

Օրինակ Նազարեանցի՝ «տկարների հետ տկար լինել լանուն ազգի և նրան օգնելու տենչանքի» սկզբունքը, նրա՝ Նազարեանցի անտիպ աշխատութիւնները լոյս հանելուն նպաստող մեկենասներին ու բաժանորդներին զովել զովարանելու սովորութիւնը Լէօն ոչ միայն, իր խօսքերով ասենք, «սիրտ չի անում դատապարտելու», այլ և՛ «հաշտուում է արն բանի հետ, որ այդպիսի խօսքեր արտասանողը Ստեփաննոս Նազարեանցի շրթունքներն են»: Որպիսի մեղմը խօսքեր, քնքուշ վերաբերմունք «Նազարեանցի շրթունքները»... Եւ Լէօ ոչ միայն ինքն է հաշտուում, այլ և հաշտեցնում է իր ընթերցողներին, բացականչելով. «միթէ հէնց այժմ էլ դրութիւն չունի այդ մի և նոյն դրութիւնը» (Ստ. Նազ. հատ. Ա. եր. 125—127):

Մի այլ օրինակ. Նազարեանցն իր մի անտիպ աշխատութիւնը նուիրում է Յովհաննէս եպիսկոպոս Եանխաթունեանցին: Մի քանի տարուց լետոյ նոյն աշխատութիւնը նուիրում է Լազարեան տոհմի վաղամեռիկ մանուկ Յովհաննէսի լիշատակին: Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան իր լոյս հանած «Յովհ. եպս. Եանխաթունեանցի կենսագրութեան» մէջ Նազարեանցի այդ վարմունքը «աններելի» է համարում արն պատճառով, որ Նազարեանցը՝ «100—150 բուլբլի ստանալու համար մոռանում է արն բարեկամի անունը որին չորս տարի առաջ ընծայած էր աշխատութիւնը»: Լէօն մէջ բերելով այս հանդամանքը, եզրակացնում է. «Նազարեանցը ուրեմն մեղադրուում է մի գծուծ չահասիրութեան համար» և աշխատելով ջրել Սեդրակեանի մեղադրանքը ասում է. «արն ժամանակ պէտք է ընդունենք, որ զանազան կողմերից թափուող ցաւակցութիւններն էլ գրել են միայն այնպիսի մարդիկ, որոնք Լազարեաններից 100—150 բ. էին ստացել» (Ստ. Նազ. Բ. հատ. եր. 392):

Սքանչելի փաստաբանութիւն:

Եւ այսպէս Ստեփաննոս Նազարեանցի գործած ուրիշ սխալ քայլերը կամ արտալաւտած գաղափարները Լէօն արդարացնում է է որ նրա ստացած կրթութեամբ, է որ ունեցած

աշխարհահայեցողութեամբ, ք որ կացութեան պայմաններով
 և պէն, բայց երբ խնդիրը վերաբերում է Նազարեանցի հակառա-
 կորդներին՝ Լէօն լիշոցներ է շաղ տալի ամեն առատութեամբ. չէ
 խնայում մինչև անգամ իր Լէօի խօսքերով՝ «Ներոս, եռան-
 դուն, խելօք, հեռատես»¹⁾, անուանած հողորակաւորին, Ներ-
 սէս Աշտարակեցուն նախապաշարուած հանդիսացնելու
 աչք բանի համար, որ Նազարեանցին պաշտօնի չկանչեց, հա-
 ւատ չընծայեց, Այն խնդիրը, որ հասնում է Էջմիածնի հողե-
 ւորակաւորութեանը, թէկուզ նրա հերոս, հեռատես ներկայա-
 ցուցչին, պէտք է հաշուել: Սա մեր օրերում արդէն առջա-
 դիմական համարուելու անհրաժեշտ նշան ու սրահն: Չ լինելու
 հետ, «նոր արձուբնից» սկսող հասարակների ծախահարու-
 թիւններին արժանանալու աներկրալի պայմանն է դարձել:

Ընդհանուր առմամբ Լէօն իր «Ստեփաննոս Նազարեան-
 ցով» մի առանձին նորութիւն չի տալու ընթերցողներին,
 քան այն, որ տուել է, օրինակ, Սմբատ Շահազիզեանի իր
 «Հրապարակախօս ձայնով» դեռ սրանից 21՝ տարի առաջ,
 ձգմարիտ է, Լէօի լեզուն անհամեմատ աւելի հասկանալի, նիւ-
 թի դասաւորութիւնը աւելի մատչելի է, քան Շահազիզինը,
 բայց սրա փոխանակ՝ «Հրապարակախօս ձայնի» մտածողու-
 թիւններն աւելի խոր են, արձակած վճիռները անկեղծ հա-
 ւատի, դիտութեան և իւրացրած համոզմունքն են, քան ե-
 րի արդիւնք են, այն ինչ Լէօինը անդիր արածի, ամենօրեայ
 դորձածութիւնից արդէն մաշուածի, հակառակորդներին ա-
 ուանձին հաճողով հաշուողի, մեծամտօրէն քամահարողի տպա-
 ւորութիւններ են թողնում: Այնպէս որ ստանձին հատորնե-
 րով լոյս հանած զրքերի մէջ էլ Լէօն մնացել է նոյն Քրա-
 յիօրը, կանչուողը, ինչպէս նա կալ ու կալ «Մշակի» քննա-
 դատականներում, բանասիրականներում ու կիրակնօրեայ
 զրոյցներում:

Լէօի այս առանձնաբառով զօրքը դեռ այնպէս աչքի
 չեն ընկնում այժմեան մեծ մասամբ անբովանդակ «Մշակի»
 մէջ, նամանաւանդ «Վրձինի» նման օրինակելի խելառ միլառ
 յօդուածների շարքում, ինչպէս սուր կերպով երևում են՝ Ստե-
 փաննոս Նազարեանց» երկհատոր աշխատութեան մէջ: Նա-
 զարեանցի ամեն մի ասացուածքը, հակառակորդներին ուղղած
 դարձուածները, կամ ազգային ու դիտական խնդիրների վե-
 րաբերմամբ արած խորհրդածութիւնները, դիտողութիւնները
 կրում են լրջութիւն, ծանրութիւն, խորին ուսումնասիրու-
 թիւն, հիմնական ծանօթութիւն, ազդում են հասկացողու-
 թեանդ, սրտիդ, իսկ Լէօի դատողութիւնները, տեղի անտեղի
 շոպլած գովեստներն ու հաշուանքները, արձակած դատա-
 վճիռները մի և նոյն զրքերում, Նազարեանցի խօսքերին ու
 մտքերին կողէկող՝ երևում են ջրալի և անհամ:

¹⁾ Ստ. Նազ. I եր. 118—9.

Արդէն մեր ազգի առաջադիմական ընթացքի տարաբաղ-տուութիւնը բնորոշուած է այն հանգամանքով, որ նոր գրա-կանութեան, նոր շարժման սկիզբ դնողը եղել են Խաչատուր Արուսեանցի կամ Ստեփաննոս Նազարեանցի նման եւրոպա-կան գիտութեան աւազանի մէջ վերածնուած, խկապէս բա-նիրուն անձինք, իսկ մի և նոյն գործի առաջ տանողները քսաներորդ դարի անհամեմատ առաւել լուսաւոր ու գիտու-թեամբ ճոխացած մեր միջոցներում են այսօր Ալէքսանդր Քա-լանթար, Լէօ, որոնք ի պաշտօնէ խօսում են ու գրում եւ-րոպականութիւնից ու եւրոպայից առանց սրանց հոտն առած լինելու: Եւ ի լրումն այս կատակերգութեան այսօր Քալանթար ու Լէօ նոյնպէս «բանիրուն» են հռչակուում ու վկայուում իրենց տանը՝ «Մշակի» էջերում իրենց «իդեալի»՝ Ստ. Մալ-խասեանցի ձեռքով ¹⁾: Բնչ անենք, որ համանման վարմուն-քը Լէօ—Թէկուղ համեստօրէն խօսելով «չատ անպաշած ու անտեղի» է համարում Նազարեանցի ու Նալբանդեանցի վե-րաբերմամբ ²⁾:

Լէօն ունի լաւ գրելու շնորհ կարգացածները միտք պա-հելու սուր լիշողութիւն, ունի աշխատասիրութիւն բաց այս ամբողջ շատ քիչ են այնպիսի լանդուզն ձեռնարկութեան հա-մար, ինչպիսին որ է առաջադիմութեան էվօլյուցիայի պատ-մութիւն գրելը, գրական շարժումներ առաջ բերող խոշոր գործիչների քայլեր քննադատելը, նոր գաղափարների ժողո-վըրդականացնելը, վիճող բանակների, տիրող վարդապետու-թիւնների ու շարժումների ծագումն, ընթացքը պատճառների լուսաբանելը: Սորա համար անհրաժեշտ է սխտեմատիքաբար ստացած ուսում, եւրոպական գրականութեան հետ լաւ ծանօ-թութիւն բուն աղբիւրների ուսումնասիրութեամբ, այլ ոչ խղճով քրիստոնատեաների, սեղմ գրական պատմութիւնների ու հանրագիտական բառգրքերի միջով: Անհրաժեշտ է գիտու-թեան խոշոր պաշար:

Լէօն անվերջ գրում է «Հայոց գրականութիւնը» լոյս է ընծայել «Ստեփաննոս Նազարեանցը» (լոյս է ընծայելու «Կրի-զոր Արժրուհի») և այդ ամենը այնպիսի ծրագրով ու լուսաբա-նիւթիւններով, որով ձգտում է հանդէս հանել մեր քաղաքա-կանութեան, մեր լառաջադիմութեան գործի էվօլյուցիան: Բայց ոչ «նոր պրօլերեսից» սկսող հայի ընթերցողներին խելա-պատակը կարող է տանել այդ նիւթի պահանջող ծաւալն ու իմաստը, որքան էլ «Հայր մեր որ լերկինս ես» դարձնի «Մեր Հայր որ երկնքումն ես», և ոչ էլ տասը տարի շարունակ «ալ-բուբեն» դասաւանդող վարժապետը պիտի իր աշակերտների տգիտութիւնից այնքան մեծամտի, նրանց զովքերից այնքան շլանալ, որ իր ուժերն ու կարողութիւնը այդ աստիճան մո-ռանալ:

Եթէ մեր լառաջադիմական գործի այսօրուայ խալտառակ կացութիւնը պսակելու համար չար բաղդը Լէօներին ընտրել է

վերին դատաւոր, բոլոր սրտից կցանկալինք դոցա զգաստանալ, զդուշանալ, խմանալ ու պահել իրեն շնորհների և զիտութեան սահմաններում, որով շատ աւելի համակրելի ու պատուաւոր կլինեն, քան թէ այժմ, որ թամբել են իրենց փալտէ ձին և ուղում են թռչել Օլլիմպոսի դադաթը՝ Արամադչի գլխից ամեն իմաստութիւնը խլելու:

Եւ մեր լառաջադիմական գործի այս օրինակ լետադարձ վիճակի մէջ լինելու, իրերի այսքան ողբերգական թէ կառաւորագական դասաւորութեան շնորհիւն է, որ ինչպէս խոստովանում է Լէօ այսօր՝ «հայ ժամուկի ընթերցողը զարգացած դասակարգը չէ» այլ «այլուրեքնից սկսող հասարակ ժողովուրդը»:

Այն ալլապէս չէր կարող լինել, քանի որ «Արձադանքը» դադարեց, քանի որ Գրիգոր Արծրունու աթոռին անարժանապէս բաղմել Ալէքսանդր Փալանթարներ, քանի որ հասարակակալն խնդիրներ լարուցանող, մշակող, սրանց ուղղութիւն ստուղ, մեր լուսաւորութեան էվոլյուցիան գրող կհանդիսանան «Շուշուալ-Ղալի գիտութեան աւազանում մկրտուած Լէօնէր»:

Այժմեան իրենք իրենց առաջադիմական անուուանողներին աչն հրապարակական խոստովանութիւնը թէ զարգացած հայ դասակարգ չէ կարողում իրենց զբաժները, թէ իրենց թերթը՝ «Մշակ» չունի այնքան բաժանորդներ, որ ծածկէ իր ծախսերը, մի մի պերճախօս ապացոյցներ են «Մշակի» լետադիմութեան ու անկման և տնարոյս լառաջադիմականների ակներև ապիկարութեան:

Ներեցէք, ալլապէս չէր Նազարեանցի ժամանակ:

Ալլապէս չէր և ոչ Գրիգոր Արծրունու ժամանակ:

Նազարեանցի «Հիւսիսափայլը» կարողում էին ժամանակի հայ զարգացած դասակարգերը: Նրա կամ հետը կամ դէմն էին ժամանակի բոլոր լալտնի ուժերը ու մարդիկը: Ալլ բան է, որ զարգացածներին թիւը քիչ էր:

Նազարեան Ստեփաննոս, Արծրունի Գրիգոր զիտութեան պաշարով մարդիկ էին ու բնականաբար իրենց հասկացողներին, իրենց հետ հաւասարների ընկերակցութիւնն ու ընդդիմութիւնները պիտի որոտէին, իրենց շրջանի պահանջի համեմատ՝ և՛ սնունդի, և՛ նիստ ու կացի պահանջ պիտի զգային: Ալլ կերպ և լինել չէր կարող: Նրանք չէին կարող ջուր ծեծել, ոչ քամի արածացնել, ալլ արդէն այսօրվայ լամպլիկ առաջադիմականների գործն է:

Մի տանը տարի և Փալանթարի ու Լէօի «Մշակը» այսօր արդէն դատարել է՝ հայ զարգացած դասակարգի համար գոլութիւն ունենալուց, դադարել է հասարակական կիողղ խնդիրներ լարուցանելու ու արժանաւոր կերպով մշակելու կարողութիւնից, դադարել է մեր գործող դասակարգերի վրայ աղքեցութիւն ու կշիռ ունենալուց և դարձել է միայն «նոր այ-

ըրուբենից» սկսողների հետաքրքրութեան «հասարակ ժողովըրդի» պարզամտութեան առարկայ:

Այսքան էլ ողորմելի լառաջադիմութիւն:

Այսքան էլ բնորոշ գնահատութիւն իրենց գործունէութեան ու արժանիքի,

Եւ միթէ այլ տեսակ հետեանքներ կարող էին առաջացնել դրանց անվերջ հայհուանքներ, դրանց գինովացած ինքնապաշտութիւնը, դրանց բերան սերտած «Լալն համամարդկային» զաղափարների անուան տակ գործ դրած ամենանեղ սիրա եղբայրատեցութիւնները, ծայրագոյն աններողամիտ վերաբերմունքներն ու հալածանքները զէպի իրենց հակառակորդները, զէպի նրանց առ հասարակ, որոնք իրենց փարախից չեն, որոնք իրենց նման մտածող չեն, իրենց թուժակով ածող ու պարողներից չեն:

Այն, ցաւալի, շատ ցաւալի, որ այսօր զարդացած հալ դասակարգը երես է դարձրել մեր մամուլից (այս հարցին կը դառնանք մի այլ անդամ), ցաւալի է, որ այսօր քիչ շատ կամք, խելք, դիրք ու հասկացողութիւն ունեցող հայերի աչքում կորցրել է հալ մամուլը իր նշանակութիւնը ու աւելի ցաւալին այն է, որ այսօրուայ «այլուբենից» սկսողներն էլ վաղը մի փոքր որ առաջանան—զարգանան, պիտի աւելի զգուանքով շուռ տան երեսները իրենց «փոքրիկութիւնը» շահագործող առաջադիմականներին:

Այս այսպէս լինելով տուժողը-կորչողը պիտի լինի հայութիւն, աշխարհօրէն չահուող նրանք, որոնք փոքրիկներին գալթակղեցնում են, որոնք իրենք իրենց փառաբանում են, որոնք եւրոպական քաղաքակրթութիւն չ'յս գիտութիւն աւելով հասկանում են անասնձութիւն և տնական ինքնուրուիւրը, մամուլ աւելով հասկանում են առատ կաթ տուող կով, ընթերցող աւելով հասկանում են իրենց կաթը սպառող մանուկ: Այս թշուառ առաջադիմութիւնը տեսնելով, մնում է մեզ անմահ Նազարեանցի նման ասել.

«Ազգերնիս կը լառաջադիմ է կոր»:

ԽԱԿՈՒՆԻ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼԵՋԱՑԻՆԵՐԸ

Անցեալները «Նոր-Գարը» հաղորդել էր, թէ ամերիկացի մի խումբ լեհացիներ ցանկալով առանձին, ազգալին անկախ